

**PROJECT: ACADEMIC CITY**  
**ԾՐԱԳԻՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ**

**Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science,  
Culture and Sports of the Republic of Armenia**

**Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն  
կրթության և գիտության կոմիտե**

as the Client

որպես Պատվիրատու

**TUM International GmbH**

**ԹՈՒՄ Ինթերնեյշնալ ՋիԷմբիԷյ**

as the Consultant

որպես Խորհրդատու

and

և

**Academic City Fund**

**Ակադեմիական քաղաք հիմնադրամ**

as the Beneficiary

որպես Շահառու

---

**CONSULTANCY AGREEMENT**

relating to

**Shaping the Academic City for a Long-Term Success**

**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝**

**միավաճ Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության շնորհիվ**

**THIS CONSULTANCY AGREEMENT RELATING TO SHAPING THE ACADEMIC CITY FOR A LONG-TERM SUCCESS** (the “**Agreement**”) is dated October 17, 2024, and made by and among:

**HIGHER EDUCATION AND SCIENCE COMMITTEE OF THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORTS OF THE REPUBLIC OF ARMENIA**, with address at 22 Orbeli Brothers Street, Yerevan 0028, Republic of Armenia (the “**Client**”), represented by its Chairman, Sargis Hayotsyan (Identification Card No. 011564788), acting on the basis of the Client’s charter;

**TUM INTERNATIONAL GMBH**, a company incorporated under the laws of the Federal Republic of Germany pursuant to the registration court (Amtsgericht München) with registration number HRB 173096 and having its principal place of business at Freddie-Mercury-Str. 5, 80797 Munich, Germany (the “**Consultant**”), represented by its Managing Director, Friederike Hettinger; being a wholly owned subsidiary of the Technical University of Munich; and

**ACADEMIC CITY FUND**, with registration number 222.160.1315877 and with address at Gitavan-2, Ashtarak 0204, Republic of Armenia (the “**Beneficiary**”), represented by its Director, Armen Simonyan (Identification Card No. 010663086), acting on the basis of the Beneficiary’s charter.

The Client, the Consultant, and the Beneficiary are sometimes referred to herein individually as a “**Party**” and together as “**Parties**.”

**WHEREAS**

- (i) The Government of the Republic of Armenia (the “**Government**”) has undertaken the design, construction, and development of the Academic City Project (the “**Project**”).
- (ii) As a result of procurement procedure, the Government has approved, by Government Resolution No. 1535-A, dated September 26,

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ՝ ՄԻՏՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ (այսուհետ՝ «**Պայմանագիր**») կնքվել է 2024 թվականի հոկտեմբերի 17-ին հետևյալ յոդմանքի միջև.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ՝ իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0028, Օրբելի եղբայրների փող. 22 (այսուհետ՝ «**Պատվիրատու**»), ի դեմս նախագահ Սարգիս Հայոցյանի (նույնականացման քարտ համար՝ 011564788), որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա,

ԹՈՒՄ Ինթերնեյշնալ ՋինթրիԷյ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքների համաձայն հիմնադրված և գործող ընկերություն, ըստ գրանցման դատարանի (Անսգերիչտ Մյունխեն) լիներով Մյունխենի տեխնիկական համալսարանին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն գրանցման համար՝ HRB 173096, գտնվելու հասցե՝ Գերմանիա, Մյունխեն 80797, Ֆրեդի-Մերկուրիի փող. 5 (այսուհետ՝ «**Խորհրդատու**»), ի դեմս շրջադիր տնօրեն Ֆրեդերիկե Հեթինգերի, և

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՀԻՄՆԱԴՐԱՄ՝ գրանցման համար՝ 222.160.1315877, իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Էջտարակ 0204, Գիտական-2 (այսուհետ՝ «**Շահառու**»), ի դեմս տնօրեն Արմեն Միմոնյանի (նույնականացման քարտ համար՝ 010663086), որը գործում է Շահառուի կանոնադրության հիման վրա:

Պատվիրատուն, Խորհրդատուն և Շահառուն այս Պայմանագրում երբեմն առանձին կոչվում են «**Կողմ**», իսկ միասին՝ «**Կողմեր**»:

**ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՈՐ**

Հայաստանի կառավարությունը Հանրապետության (այսուհետ՝ «**Կառավարություն**») նախաձեռնել է Ակադեմիական քաղաքի ծրագրի (այսուհետ՝ «**Ծրագիր**») նախագծումը, կառուցումը և զարգացումը:

Գնումների ընթացակարգի արդյունքում Կառավարությունը, 2024 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1535-Ա որոշմամբ հաստատել է Ծրագրի

2024, the sole source purchase from the Consultant of consultancy services for the Project.

իրականացման համար Խորհրդատուից խորհրդատվական ծառայությունների գնումը՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

(iii) The Consultant is a leading provider for the development, coordination and operation of integrated science and industry clusters, as well as technology transfer and talent management programs with international partners from research, politics, and industry.

Խորհրդատուն գիտության և արդյունաբերության ինտեգրված կլաստերների զարգացման, համակարգման և շահագործման, ինչպես նաև տեխնոլոգիաների փոխանցման և տաղանդների կառավարման ծրագրերի առաջատար մատակարար է, որը գործում է հետազոտության, քաղաքականության և արդյունաբերության ոլորտներում միջազգային գործընկերների հետ:

(iv) The Consultant wishes to support the long-term sustainable development of the Project and its innovation ecosystem in the Republic of Armenia towards increasing the international competitiveness of the higher education sector, focusing on:

Խորհրդատուն ցանկալի է աջակցել Հայաստանի Հանրապետությունում Ճրագրի և դրա նորարարական էկոհամակարգի երկարաժամկետ կայուն զարգացմանը՝ բարձրագույն կրթության ոլորտի միջազգային մրցունակության բարձրացման ուղղությամբ՝ կենտրոնանալով՝

(A) developing an integrated strategy to evolve the Project into a hub of excellence in education, research, innovation; and

ինտեգրված ռազմավարություն մշակելու վրա՝ Ճրագիրը վերածելու գերազանց կրթության, հետազոտության և նորարարության կենտրոնի և

(B) conceptualizing the technical cluster for higher competitiveness in education, research, and innovation.

տեխնիկական կլաստերի հայեցակարգում կրթության, հետազոտության և նորարարության բարձր մրցունակության ապահովման վրա:

**NOW, THEREFORE**, the Parties enter into the Agreement, subject to the following terms and conditions, with the aim of entering into binding contractual relations.

**ՈՒՏՄԻ**, Կողմերը համաձայնեցին պարտադիր պայմանագրային Էստիմեթությունների մեջ մտնելու նպատակով չնքել սույն Պայմանագիրը՝ հետևյալ պայմաններով:

**§ 1 Subject Matter and Parts of the Agreement**

**Պայմանագրի առարկան և մասերը**

1.1. Pursuant to this Agreement, the Consultant agrees to provide to the Client professional consultancy services as per Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement, and the Client agrees to pay for such services.

Սույն Պայմանագրի համաձայն՝ Խորհրդատուն համաձայնում է Պատվիրատուին մատուցել մասնագիտական խորհրդատվության ծառայություններ՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ի (*Գործողությունների ծրագիր. կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը*), և Պատվիրատուն համաձայնում է վճարել այդ ծառայությունների դիմաց:

1.2. The scope of the services, deliverables, timeline, and budget for the provision of the services are set out in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement, which constitutes an integral part of the Agreement and is binding on the Parties.

Ծառայությունների շրջանակը, ներկայացվելիք նյութերը, ժամկետները և քյուջեն սահմանված են սույն Պայմանագրի Հավելված 1-ով (*Գործողությունների ծրագիր. կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը*), որը կազմում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը և պարտադիր ուժ ունի Կողմերի համար:

1.3. The Consultant is not bound by any General Terms and Conditions (the “GTC”) at the time of the execution of the Agreement. Should the Consultant adopt GTC after the execution of the Agreement, such GTC will not become part of the Agreement. The application of any deviating GTC of the Client and/or the Beneficiary to the Consultant is excluded. For the avoidance of doubt, such deviating GTC does not apply to the Consultant even if the Consultant does not expressly object to the application thereof.

Սույն Պայմանագրի կնքման պահին գործող որևէ Ընդհանուր դրույթներ և պայմաններ (այսուհետ՝ «ԸԴՊ») պարտադիր բուժ չունեն Խորհրդատուի համար: Սույն Պայմանագրի կնքումից հետո Խորհրդատուի կողմից ընդունված ԸԴՊ-ն սույն Պայմանագրի մաս չի դառնում: Պատվիրատուի և (կամ) Շահառուի կողմից ընդունված որևէ տարբերվող ԸԴՊ Խորհրդատուի նկատմամբ չի կիրառվում: Կասկածից չուսափելու համար՝ տարբերվող ԸԴՊ-ի էիրառումը Խորհրդատուի նկատմամբ բացառվում է, եթե անգամ Խորհրդատուն ուղղակիորեն չի առարկում դրա կիրառման դեմ:

**§ 2 Scope of Services**

**Ծառայությունների շրջանակը**

2.1. The Consultant undertakes to advise the Client in developing an integrated strategy for the Project as a whole and the technical cluster component of the Project in particular. The Consultant shall provide such services relating to the Project as set out in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to this Agreement (the “Services”).

Խորհրդատուն պարտավորվում է Պատվիրատուին խորհրդատվություն տրամադրել՝ ընդհանուր Ծրագրի և մասնավորապես դրա տեխնիկական կառուցվածքի ինտեգրված շագմավարության մշակման նպատակով: Սույն Պայմանագրի առնչությամբ մատուցվող ծառայությունները (այսուհետ՝ «**Ծառայություններ**») սահմանված են սույն Պայմանագրի Հավելված 1-ով (*Գործողությունների ծրագիր, կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Եկադեմիական քաղաքի ձևավորմանը*):

2.2. The Services shall be provided for the implementation of the Project and for the benefit of the Beneficiary.

Ծառայությունները պետք է մատուցվեն Ծրագրի իրագործման նպատակով և ի շահ Շահառուի:

2.3. The Consultant has considered information available to it at the time of drawing up the Specification of Services, Timeline and Budget set out in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to this Agreement. Insofar as the Client requests any additional services or changes to the Services (the “Client’s Change Request”), the following provisions shall apply:

Խորհրդատուն սույն Պայմանագրի Հավելված 1-ով (*Գործողությունների ծրագիր, կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Եկադեմիական քաղաքի ձևավորմանը*) նախատեսված Ծառայությունների նկարագիրը, ժամկետները և բյուջեն սահմանելիս հիմնվել է այդ պահին իրեն հասանելի տեղեկատվության վրա: Պատվիրատուի կողմից լրացուցիչ ծառայություններ կամ Ծառայությունների փոփոխություններ (այսուհետ՝ «**Պատվիրատուի փոփոխության խնդրանք**») պահանջվելու դեպքում, կիրառվում են հետևյալ դրույթները.

(a) In case the Client resolves to request any additional services or changes to the Services, the Client shall submit to the Consultant a Client’s Change Request in writing. The Consultant will review the Client’s Change Request and respond to such request in writing promptly, but in any event no later than within 7 (seven) calendar days. In its response, the Consultant shall specify: (i) whether the Client’s Change Request is feasible and (ii) whether the implementation of such

Պատվիրատուի կողմից լրացուցիչ ծառայություններ կամ Ծառայությունների փոփոխություններ պահանջվելու դեպքում Պատվիրատուն Խորհրդատուին գրավոր ներկայացնում է Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանք: Խորհրդատուն դիտարկում է Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը և պատասխանում անձապաշտ, սակայն ոչ ուշ քան 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում: Պատասխանի մեջ Խորհրդատուն պետք է հստակեցնի. (i) արդյոք Պատվիրատուի՝

request affects the remuneration and/or timeline for the provision of the Services set out in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement.

(b) If the Client's Change Request affects the remuneration and/or timeline for the provision of the Services set out in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement, the Consultant is entitled to request additional remuneration and adjustment to the timeline for the provision of the Services by submitting a proposal for the adjustment of the remuneration and timeline. If the Client accepts such proposal, the Parties shall execute an amendment to the Agreement adjusting the remuneration and timeline for the provision of the Services, as well as the scope of the Services as necessary.

(c) If a Client's Change Request does not affect the remuneration or timeline for the provision of the Services, the Consultant shall use its best efforts to implement the Client's Change Request as far as reasonably practicable. For the avoidance of doubt, the Consultant shall not request any additional remuneration for the Services as affected by such Client's Change Request.

(d) The Consultant is not required to implement a Client's Change Request if an objective reason (such as technical, or legal restrictions) justifies such rejection. In such a case, the Consultant shall immediately inform the Client of the objective reason impeding the implementation of the Client's Change Request and support the Client in adjusting the Client's Change Request so that it is acceptable for the Consultant.

փոփոխության խնդրանքն իրագործելի է (ii) արդյոք Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքն ազդում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով (Գործողությունների ծրագիրը կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը) սահմանված վարձատրության և (կամ) Ծառայությունների մատուցման ժամկետների վրա:

Եթե Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքն ազդում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով (Գործողությունների ծրագիրը կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը) սահմանված վարձատրության և (կամ) Ծառայությունների մատուցման ժամկետների վրա, ապա Խորհրդատուն իրավունք ունի պահանջելու հավելյալ վարձատրություն և Ծառայությունների մատուցման ժամկետների փոփոխություն՝ ներկայացնելով համապատասխան առաջարկ: Եթե Պատվիրատուն ընդունում է այդ առաջարկը, ապա Կողմերը պետք է կնքեն սույն Պայմանագիրը փոփոխող համաձայնագիր՝ փոփոխելով վարձատրության չափը և Ծառայությունների մատուցման ժամկետները, ինչպես նաև Ծառայությունների շրջանակը՝ ըստ անհրաժեշտության:

Եթե Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը չի ազդում վարձատրության չափ և Ծառայությունների մատուցման ժամկետների վրա, ապա Խորհրդատուն պետք է գործադրի իր լավագույն ջանքերը՝ Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը կատարելու համար՝ այնքանով, որքանով ողջամտորեն հնարավոր է: Կասկածից խուսափելու համար՝ Խորհրդատուն չպետք է պահանջի Պատվիրատուի՝ փոփոխության այդպիսի խնդրանքի ազդեցությամբ պայմանավորված՝ Ծառայությունների համար հավելյալ վարձատրություն:

Խորհրդատուն պարտավոր չէ կատարել Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը, եթե այդ խնդրանքի յատարումը մերժելը պայմանավորված է որևէ օբյեկտիվ հանգամանքով (օրինակ՝ տեխնիկական կամ իրավական սահմանափակում): Այդ դեպքում Խորհրդատուն պարտավոր է Պատվիրատուին անմիջապես տեղեկացնել Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքի կատարմանը խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքի լուրջ և օժանդակել Պատվիրատուին՝ Պատվիրատուի՝ փոփոխության խնդրանքը Խորհրդատուի համար ընդունելի ձևով փոփոխելու հարցում:

2.4. If any time after this Agreement enters into force, the Consultant reasonably believes that certain services supplemental to the Services listed in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement are necessary for the implementation of the Project, the Consultant shall inform the Client and the Beneficiary of such additional services in writing stating the scope, timeline and other specifications of such services and the additional remuneration for such services, if any (the “**Consultant’s Change Request**”). If a Consultant’s Change Request affects the remuneration and/or timeline for the provision of the Services as set out in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement, the Consultant shall submit a proposal for the adjustment of the remuneration and timeline. If the Client accepts such proposal, the Parties shall execute an amendment to the Agreement adjusting the remuneration and timeline for the provision of the Services, as well as the scope of the Services as necessary.

Եթե սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած պահի Խորհրդատուն ողջամտորեն կարծում է, որ սույն Պայմանագրի Հավելված 1-ով (*Գործողությունների ծրագիր. կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը*) սահմանված Ծառայությունները լրացնող որոշակի ծառայություններ ահրաժեշտ են Ծրագրի իրականացման համար, ապա Խորհրդատուն պետք է գրավոր տեղեկացնի Մատվիրատուին և Շահառուին այդ լրացուցիչ ծառայությունների մասին՝ նշելով այդ ծառայությունների շրջանակը, կատարման ժամկետները, այլ առանձնահատկություններ և դրանց համար հավելյալ վարձատրությունը՝ առկայության դեպքում (այսուհետ՝ «**Խորհրդատուի՝ փոփոխության խնդրանք**»): Եթե Խորհրդատուի՝ փոփոխության խնդրանքն ազդում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով (*Գործողությունների ծրագիր. կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը*) սահմանված վարձատրության և (կամ) Ծառայությունների մատուցման ժամկետների վրա, ապա Խորհրդատուն պետք է ներկայացնի վարձատրության և Ծառայությունների մատուցման ժամկետների փոփոխության առաջարկ: Եթե Պատվիրատուն ընդունում է ներկայացված առաջարկը, Կողմերը պետք է կնքեն սույն Պայմանագիրը փոփոխող համաձայնագիր՝ փոփոխելով վարձատրության չափը և Ծառայությունների մատուցման ժամկետները, ինչպես նաև Ծառայությունների շրջանակը՝ ըստ անհրաժեշտության:

2.5. The Consultant shall provide the Services with due care and conscientiousness. In doing so, the Consultant shall consider, as far as necessary and reasonable, general process descriptions, industry standards and best practices, specific regulations, methods, and application practices.

Խորհրդատուն պետք է մատուցի Ծառայությունները պարզաձև և բարեխղճորեն: Ծառայությունները մատուցելիս Խորհրդատուն պետք է հաշվի առնի, որքանով անհրաժեշտ է և ողջամիտ, ընդհանուր գործընթացների նկարագրությունները, ոլորտի ստանդարտները և լավագույն փորձը, հատուկ կանոնակարգերը, մեթոդները և կիրառման Լրաձեռնարկը:

2.6. In carrying out its activities, the Consultant is not subject to any instructions regarding the manner, the place, or the time of the provision of the Services.

Իր գործունեությունն իրականացնելիս Խորհրդատուն չի ենթարկվում որևէ հրահանգի՝ Ծառայությունների մատուցման եղանակի, տեղի կամ ժամանակի վերաբերյալ:

(a) The general working location for the provision of the Services shall be the business premises of the Consultant or certain locations in the Republic of Armenia, as specified in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the*

Ծառայությունների մատուցման հիմնական աշխատանքային վայրը Խորհրդատուի գործունեության վայրն է կամ սույն Պայմանագրի Հավելված 1-ում (*Գործողությունների ծրագիր. կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը*)

*Academic City for a Long-Term Success*) to the Agreement.

(b) The Consultant is free to determine which employees will be deployed to carry out the Services; the staff deployed by the Consultant is not bound by the instructions of the Client irrespective of the place of the provision of the Services.

(c) The Consultant shall be free to determine the working days and hours designated for providing the Services under this Agreement provided that the Consultant shall ensure efficiency and timely provision of the Services. The Client shall cooperate with the Consultant to facilitate the provision of the Services under this Agreement.

2.7. The Consultant may use other companies and/or persons (the “Subcontractors”) to perform certain tasks in the provision of the Services. The Consultant will inform the Client and the Beneficiary in writing in case Subcontractors are to be engaged. The Consultant shall remain responsible for any actions of the Subcontractors in connection with this Agreement.

2.8. Promptly upon the Agreement entering into force, the Consultant shall designate a representative authorized to act on the Consultant’s behalf with respect to the Project. Such authorized representative shall examine the documents submitted by the Client or the Beneficiary and shall render decisions pertaining thereto promptly, to avoid unreasonable delay in the progress of the Services.

2.9. The Consultant shall provide the Client and/or the Beneficiary with documents (e.g., working papers, reports, power-point presentations) in connection with this Agreement on an ongoing basis in line with the timeline and deliverables set out in Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement.

նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության որոշակի վայրեր:

Խորհրդատուն ազատ է Ճառայությունների մատուցման համար աշխատակիցների ընտրության հարցում: Խորհրդատուի կողմից ներգրավված անձնակազմը կաշկանդված չէ Պատվիրատուի ցուցումներով՝ անկախ Ճառայությունների մատուցման վայրից:

Խորհրդատուն ազատ է սույն Պայմանագրով սահմանված Ճառայությունների մատուցման աշխատանքային օրերն և ժամերի ընտրության հարցում՝ պայմանով, որ Խորհրդատուն պետք է ապահովի Ճառայությունների՝ արդյունավետ և ժամանակին մատուցումը: Պատվիրատուն պետք է համագործակցի Խորհրդատուի հետ՝ սույն Պայմանագրով նախատեսված Ճառայությունների մատուցումը խթանելու նպատակով:

Խորհրդատուն կաբող է ներգրավել այլ ընկերությունների և կա՛) անձանց (այսուհետ՝ «Ենթակապալառու»)՝ Ճառայությունների մատուցման հետ կապված որոշակի առաջադրանքներ կատարելու համար: Ենթակապալառուները կհարկվեն դեպքում Խորհրդատուն գրավոր ռեզոլյուցիոն է Պատվիրատուին և Շահառուին: Խորհրդատուն պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրի հետ կապված՝ Ենթակապալառուների ցանկացած գործողությունների համար:

Սույն Պայմանագրին բովանդակ մեջ մտնելուց անմիջապես հետո Խորհրդատուն պետք է նշանակի Ծրագրի տնօրենությամբ Խորհրդատուի անունից հանդես գալու իրավունք ունեցող ներկայացուցչի: Այդ կազմի ներկայացուցիչը պետք է ուսումնասիրի Պատվիրատուի կամ Շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը և կայացնի դրանց վերաբերյալ բոլոր մտայն անհապաղ՝ Ճառայությունների մատուցման գործընթացի անհիմն ձգձգումներից խուսափելու համար:

Խորհրդատուն Պատվիրատուին և (կամ) Շահառուին պետք է տրամադրի սույն Պայմանագրի հետ կապված փաստաթղթերը (օրինակ՝ աշխատանքային փաստաթղթեր, հաշվետվություններ, սահիկաշարեր)՝ շարունակական հիմունքներով՝ սույն Պայմանագրի Հավելված 1-ով (*Գործողությունների ծրագիր, կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը*) սահմանված ժամկետներին և ներկայացվելիք նյութերին համապատասխան:

**§ 3 General Cooperation Obligations of the Client and the Beneficiary**

**Պատվիրատուի և Շահառուի համագործակցության վերաբերյալ ընդհանուր պարտավորությունները**

- 3.1. The Client and the Beneficiary shall support the Consultant in the provision of the Services under this Agreement as necessary. Պատվիրատուն և Շահառուն անհրաժեշտության դեպքում աջակցում են Խորհրդատուին սույն Պայմանագրով նախատեսված Շառայությունների մատուցման հարցում:
- 3.2. Promptly upon the Agreement entering into force, the Client and the Beneficiary shall designate a representative authorized to act on their behalf with respect to the Project. Such authorized representative shall examine the documents submitted by the Consultant and shall render decisions pertaining thereto promptly, to avoid unreasonable delay in the progress of the Services. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո Պատվիրատուն և Շահառուն պետք է նշանակեն Ճրգարի առկայությամբ իրենց անունից հանդես գալու իրավունք ունեցող ներկայացուցիչ: Այդ լիազոր ներկայացուցիչը պետք է ուսումնասիրի Խորհրդատուի կողմից ներկայացված փաստաթղթերը և կայացնի դրանց վերաբերյալ որոշումներ անհապաղ՝ Շառայությունների մատուցման գործընթացի անհիմն ձգձգումներից խուսափելու համար:
- 3.3. The Client and the Beneficiary shall use their best efforts to ensure that the Consultant communicates with key stakeholders in the Republic of Armenia for collecting necessary data and information for the provision of the Services, when necessary. Պատվիրատուն և Շահառուն պետք է գործադրեն իրենց լավագույն ջանքերը՝ Շառայությունների մատուցման համար անհրաժեշտ տվյալների և տեղեկատվության հավաքման նպատակով Հայաստանի Հանրապետությունում հիմնական շահագրգիռ կողմերի հետ անհրաժեշտության դեպքում Խորհրդատուի հաղորդակցությունն ապահովելու համար:
- 3.4. The Client and the Beneficiary shall make available for the Consultant suitable offices and conference rooms, when necessary, for the field work and events taking place in the Republic of Armenia. Պատվիրատուն և Շահառուն Խորհրդատուին անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրեն համապատասխան գրասենյակներ և կոնֆերանսների սրահներ՝ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող դաշտային աշխատանքների և միջոցառումների համար:
- 3.5. The Client and the Beneficiary shall furnish information and/or documents necessary for the provision of the Services as requested by the Consultant, to the extent available to the Client and the Beneficiary, as expeditiously as possible to ensure the orderly progress of the Services. Պատվիրատուն և Շահառուն պետք է Խորհրդատուին ըստ պահանջի տրամադրեն Շառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն և (կամ) փաստաթղթեր՝ այնքանուհի որքանով դրանք հասանելի են Պատվիրատուին և Շահառուին՝ հնարավորինս արագ՝ ապահովելու Շառայությունների մատուցման գործընթացում կանոնավոր առաջընթացը:
- 3.6. The Client shall use its best efforts to ensure that all state and non-state entities cooperate with the Consultant in a timely manner as required for the orderly progress of the Services without any additional fee. Պատվիրատուն պետք է գործադրի իր լավագույն ջանքերը՝ ապահովելու համար որ բոլոր պետական և ոչ պետական մարմինները ժամանակին, առանց որևէ լրացուցիչ վճարի համագործակցեն Խորհրդատուի հետ՝ ապահովելու Շառայությունների մատուցման գործընթացում կանոնավոր առաջընթացը:

**§ 4 Remuneration**

4.1. The remuneration for the Consultant's Services under this Agreement (the "**Consultant's Services Fee**") shall consist of (i) EUR 685,000 (six hundred eighty-five thousand) (exclusive of VAT) for the scope and deliverables outlined in Sections A to C of Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement (the "**Fixed Component of Consultant's Services Fee**"), and (ii) up to EUR 45,400 (forty-five thousand four hundred) for travel and workshops as set out in Section D of Annex 1 (*Action Items – A Sustainable and Actionable Vision: Shaping the Academic City for a Long-Term Success*) to the Agreement (the "**Variable Component of Consultant's Services Fee**").

4.2. The Consultant's Services Fee shall be paid in Euro.

4.3. The Fixed Component of Consultant's Services Fee shall be charged according to the following payment schedule:

- 20% advance payment after signing the Agreement
- 30% after M4
- 30% after M8
- 20% after M12 after Project completion.

4.4. The Variable Component of the Consultant's Services Fee shall be paid based on the invoices submitted by the Consultant for the upcoming trips and workshops which must be accompanied by a justification of the estimated expenses for such trips and workshops.

4.5. All payments of the Fixed Component of the Consultant's Services Fee shall be processed by the Client according to the payment schedule. Invoices for the Fixed Component of the Consultant's Services Fee are due for payment and payable without any deduction within 30 (thirty) calendar days from the date of receipt of the respective invoice. The advance payment is to

**Վարձատրություն**

Սույն Պայմանագրով նախատեսված Խորհրդատուի Ծառայությունների վարձատրությունը (այսուհետ՝ «**Խորհրդատուի ծառայությունների վճար**») կազմում է (i) 685,000 (վեց հարյուր ութսունհինգ հազար) եվրո (առանց ԱԱՀ-ի)՝ սույն Պայմանագրի Հավելված 1-ի (Գործողությունների ծրագիր կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը) A-ից C մասերով սահմանված ծառայությունների շրջանակի և ներկայացվելիք նյութերի համար (այսուհետ՝ «**Խորհրդատուի ծառայությունների վճարի հաստատուն բաղադրիչ**»), և (ii) մինչև 45,400 (քառասունհինգ հազար չորս հարյուր) եվրո՝ սույն Պայմանագրի Հավելված 1-ի (Գործողությունների ծրագիր կայուն և իրագործելի տեսլական՝ միտված Ակադեմիական քաղաքի երկարատև հաջողության ձևավորմանը) D մասով նախատեսված ճամփորդությունների և աշխատարանների համար (այսուհետ՝ «**Խորհրդատուի ծառայությունների վճարի փոփոխական բաղադրիչ**»):

Խորհրդատուի ծառայությունների վճարը վճարվում է եվրոյով:

Խորհրդատուի ծառայությունների վճարի հաստատուն բաղադրիչի համար վճարումը կատարվում է հետևյալ ժամանակացույցով.

- 20% կանխավճար՝ Պայմանագիրը ստորագրելուց հետո
- 30% 4-րդ ամսից հետո
- 30% 8-րդ ամսից հետո
- 20% 12-րդ ամսից հետո՝ Ծրագիրն ավարտելուց հետո:

Խորհրդատուի ծառայությունների վճարի փոփոխական բաղադրիչը վճարվում է Խորհրդատուի կողմից առաջիկա ճամփորդությունների և աշխատարանների համար ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա, որոնք պետք է ուղեկցվեն այդ ճամփորդությունների և աշխատարանների համար նախատեսված ծախսերի հիմնավորմամբ:

Խորհրդատուի ծառայությունների վճարի հաստատուն բաղադրիչի բոլոր վճարումները պետք է կատարվեն Պատվարատուի կողմից՝ համաձայն վճարման ժամանակացույցի: Խորհրդատուի ծառայությունների վճարի հաստատուն բաղադրիչի համար հաշիվ-ապրանքագրերը ենթակա են վճարման և պետք է վճարվեն՝ առանց որևէ նվազեցման, համապատասխան հաշիվ-ապրանքագրի ստացումից հետո՝ 30 (երեսուն)

be received on the Consultant's account before commencing the Services.

օրացուցային օրվա ընթացքում: Կանխավճարը պետք է մուտքագրվի Խորհրդատուի հաշվին՝ նախքան Ծառայությունները մատուցելու գործընթացը սկսելը:

4.6. For all payments of the Fixed Component of the Consultant's Services Fee, apart from the advance payment, the Client and the Beneficiary must confirm in writing, before the Consultant will be able to issue the respective invoice, that neither the Client nor the Beneficiary has any objections as to the quality or adequacy of such portion of the Consultant's Services for which the Consultant is to submit an invoice.

Խորհրդատուի ծառայությունների վճարի հաստատուն բաղադրիչի բոլոր վճարումների դեպքում, բացի կանխավճարից, նախքան Խորհրդատուն կկարողանա հաշիվ-սպրանքագրեր ներկայացնել, Պատվիրատու և Ծահառուն պետք է գրավոր հաստատեն, որ ոչ Պատվիրատուն, ոչ էլ Ծահառուն որևէ առարկայություն չունեն Խորհրդատուի Ծառայությունների այն մասի որակի կամ համապատասխանության առնչությամբ, որի հաշար Խորհրդատուն հաշիվ-սպրանքագիր է ներկայացնելու:

4.7. The Consultant's Services Fee set out under Clause 4.1. shall be deemed to cover all expenses of the Consultant in connection with the provision of the Services under this Agreement, including out-of-pocket expenses of the Consultant, cost of travel, workshop attendance and any ancillary expenses of the Consultant incurred in connection with the provision of the Services.

Սույն Պայմանագրի 4.1. հոդվածով սահմանված՝ Խորհրդատուի ծառայությունների վճարը համարվում է սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման հետ կապված բոլոր ծախսերի հումար ամբողջական փոխհատուցում՝ ներառյալ Խորհրդատուի ընթացիկ ծախսերը, ճանապարհորդության ծախսերը, աշխատարաններին մասնակցությունը և Խորհրդատուի կողմից Ծառայությունների մատուցման հետ կապված ցանկացած այլ օժանդակ ծախս:

4.8. The Consultant shall be responsible for and shall pay (or cause to be paid) all taxes imposed upon the Consultant's net income and payroll taxes.

Խորհրդատուն պետք է կրի և վճարի (կամ նպաստի, որ վճարվեն) բոլոր հարկերը, որոնք գանձվում են Խորհրդատուի շուտ շահույթից և աշխատավարձերից:

4.9. The Consultant shall provide a tax residence certificate issued by the relevant tax authorities.

Խորհրդատուն պետք է ներկայացնի համապատասխան հարկային մարմինների կողմից տրված՝ հարկային ռեզիդենտության վկայական:

## § 5 Liability, Limitation of Damages Claims

### Պատասխանատվություն, վնասի հատուցման պահանջների սահմանափակում

5.1. The Consultant shall be liable to the Client for any damage caused to the Client in connection with the provision of the Services under this Agreement resulting from fraudulent intent, willful misconduct, or gross negligence. Any damage caused by slight negligence will be compensated only if a material contractual obligation is breached. The liability for such breach of material contractual obligation will be limited to the actual damages and any foreseeable damages typical in comparable circumstances.

Խորհրդատուն պատասխանատվություն է կրում Պատվիրատուի առջև սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման հետ կապված՝ Պատվիրատուին խարդախությամբ, դիտավորությամբ կամ չոպխտ անփութությամբ պատճառված ցանկացած վնասի համար: Անփութությամբ պատճառված ցանկացած վնաս ենթակա է հատուցման միայն պայմանագրային էական պարտավորություն խախտման դեպքում: Պայմանագրային էական պարտավորության այդպիսի խախտման համար պատասխանատվությունը սահմանափակվում է իրական վնասով և նմանատիպ հանգամանքներում կանխատեսելի ցանկացած այլ վնասով:

5.2. The liability for any potential loss of or damage to data will be limited to the expenses of proper data backup.

Տվյալների ցանկացած հնարավոր կորստի կամ վնասի համար պատասխանատվությունը սահմանափակվում է տվյալների պատշաճ պահպանման համար անհրաժեշտ ծախսերով:

5.3. Insofar as permissible under the applicable laws to this Agreement, no Party shall be liable to the other Parties for any loss of profits, loss of business, loss of revenue, loss of anticipated savings, or any indirect or consequential loss or damage, whether foreseeable or unforeseeable, arising out of or in connection with this Agreement.

Այնքանով, որքանով թույլատրելի է սույն Պայմանագրի նւստմամբ կիրառելի օրենսդրությամբ, ոչ մի Կողմ պատասխանատվություն չի կրում մյուս Կողմերի առջև սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված՝ շահույթի կամ ձեռնարկատիրական կորստի, եկամուտների կամ ակնկալվող խնայողությունների կամ որևէ անուղղակի կամ հետևանքային կորստի չամ վնասի համար՝ անկախ այդպիսի կորստի կամ վնասի կանխատեսելի կամ անկանխատեսելի լինելու հանգամանքից:

5.4. Notwithstanding any provision to the contrary, claims for damages based on injuries affecting a person's life, body or health will remain unaffected by the above limitations of liability.

Անկախ սույն Պայմանագրի ցանկացած դրույթից՝ անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման առաջնության վրա վերոնշյալ սահմանափակումները չեն տարածվում:

**§ 6 Confidentiality, Non-disclosure**

**Գաղտնիություն, չբացահայտման վերաբերյալ համաձայնություն**

6.1. For the avoidance of doubt, the following provisions shall apply to the Parties regardless of any non-disclosure agreements signed between the Parties.

Կասկածից խուսափելու համար՝ անկախ Կողմերի միջև ստորագրված տեղեկությունների չբացահայտման որևէ համաձայնագրից, Կողմերի նկատմամբ կիրառվում են հետևյալ դրույթները:

6.2. All information (including the terms of this Agreement) provided by either Party to the other Parties, which is identified or marked by the disclosing Party as confidential or proprietary information or that reasonably should be known to be confidential, shall be treated in a confidential manner and shall not be disclosed to any third party without the prior written consent of the disclosing Party, which consent shall not be unreasonably withheld. All confidential information that a disclosing Party provides to a receiving Party shall not be used by the receiving Party for any purpose not permitted under this Agreement.

Բոլոր այն տեղեկությունները (ներառյալ սույն Պայմանագրի դրույթները), որոնք տրամադրվել են Կողմերից մեկի կողմից մյուսներին և որոնք բացահայտող Կողմը նշել կամ սահմանել է որպես գաղտնի տեղեկատվություն կամ սեփականություն կամ որոնք ողջամտորեն պետք է համարվեն գաղտնի, պետք է համարվեն գաղտնի և չպետք է տրամադրվեն որևէ երրորդ կողմի առանց բացահայտող Կողմի նախնական գրավոր համաձայնության, որը չպետք է անհիմն կերպով չտրամադրվի: Բացահայտող Կողմի կողմից ստացող Կողմին տրամադրված գաղտնի տեղեկությունները սաացող Կողմի կողմից չպետք է օգտագործվեն սույն Պայմանագրով չթույլատրված որևէ նպատակով:

6.3. Each Party shall have the right to disclose confidential information to its directors, officers, employees, agents, and representatives provided that the persons to whom such disclosure is made will be informed of the confidential nature of such information and will be bound by

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի գաղտնի տեղեկատվությունը տրամադրելու իր տնօրեններին, աշխատակիցներին, գործակալներին և ներկայացուցիչներին՝ պայմանով, որ այն անձինք, որոնց այդ տեղեկատվությունը տրամադրվում է, տեղեկացված կլինեն այդ տեղեկատվության գաղտնիության մասին և եթե կա կլինեն սույն Պայմանագրով նախատեսված կարգավորումներին

confidentiality obligations similar to those contained in this Agreement.

համանման՝ գաղտնիության վերաբերյալ կարգավորումների:

6.4. Notwithstanding Clause 6.2. of this Agreement, confidentiality shall not apply to:

Անկախ սույն Պայմանագրի 6.2. հոդվածից՝ գաղտնիության վերաբերյալ կարգավորումները չեն կիրառվում հետևյալ դեպքերում.

(a) disclosure or use of any confidential information to the extent necessary to render the Services or perform the obligations pursuant to this Agreement, provided that any disclosure to a third party is made subject to confidentiality obligations similar to those contained in this Agreement;

ցանկացած գաղտնի տեղեկատվության բացահայտում կամ ձգտագործում այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ծառայությունները մատուցելու կամ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելու համար՝ պայմանով, որ երրորդ կողմին ցանկացած տեղեկատվության տրամադրում ենթակա է սույն Պայմանագրով նախատեսված կարգավորումներին համանման՝ գաղտնիության վերաբերյալ կարգավորումների,

(b) information which, at the time of disclosure by the Party, has already been publicly available without any breach of confidentiality by the receiving Party;

տեղեկատվություն, որը մի կողմի կողմից բացահայտման պահից աղբյուր հասանելի է եղել հանրությանը՝ առանց ստացող կողմի կողմից գաղտնիության վերաբերյալ կարգավորումների խախտման,

(c) information which the disclosing Party has expressly authorized in writing to be disclosed;

տեղեկատվություն, որը բացահայտող կողմը գրավոր ձևով հստակորեն լիազորել է բացահայտել,

(d) information which the receiving Party has obtained lawfully and without restriction as to confidentiality from other sources, provided that the disclosure and use of such confidential information does not violate any contractual obligations, legal provisions, or governmental orders;

տեղեկատվություն, որը ստացող կողմը ստացել է օրինակաւորեւն և այլ աղբյուրներից՝ առանց տեղեկատվություն սահմանափակում համար գաղտնիության սահմանափակման՝ պայմանով, որ այդ գաղտնի տեղեկատվության բացահայտումն ու օգտագործումը չեն խախտում որևէ պայմանագրային պարտավորություն, իրավական դրույթ կամ պետական մարմինների հրաման,

(e) information which the receiving Party has developed without reference to the disclosing Party's confidential information;

տեղեկատվություն, որը ստացող կողմը մշակել է առանց բացահայտող կողմի գաղտնի տեղեկատվությանը հղում կատարելու,

(f) information which must be disclosed under the laws applicable to the Parties or this Agreement. To the extent permissible, the Party that is required to disclose such information shall inform the other Parties as soon as reasonably practicable of such disclosure.

տեղեկատվություն, որը պետք է բացահայտվի՝ կողմերի կամ սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի օրենքների համաձայն: Այն կողմը, որից պահանջվում է բացահայտել այդ տեղեկատվությունը, թույլատրելիության սահմաններում պետք է տեղեկացնի մյուս կողմերին այդ բացահայտման մասին՝ որքանով ողջամտորեն հնարավոր է արագ:

6.5. Should any governmental authority, court of law or any equivalent authority request information deemed confidential under this Agreement from any of the Parties, such Party shall not be liable for any breach of confidentiality under this Agreement resulting from such requested disclosure, provided that it takes immediate steps

Եթե որևէ պետական մարմին, դատարան կամ որևէ համարժեք մարմին կողմերից որևէ մեկից պահանջի սույն Պայմանագրի համաձայն գաղտնի համարվող տեղեկատվություն, ապա պահանջը ստացած կողմը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրի գաղտնիության վերաբերյալ կարգավորումների սխալի խախտման համար, որը բխում է բացահայտման պահանջից՝

to inform the other Parties of the official request for disclosure. The other Parties shall have the right to contest any such official request for disclosure.

- 6.6. Each Party must carefully store, in mutual interest, any documents provided to it for the purpose of performing the contractual provisions. These documents shall be promptly returned upon termination of this Agreement if so requested.
- 6.7. The confidentiality obligation under this Agreement shall survive the termination or expiration of this Agreement and shall remain in force for a period of 5 (five) years upon such termination or expiration.

**§ 7 Data Protection**

- 7.1. Each Party shall process and use personal data in connection with this Agreement in accordance with the provisions of applicable data protection laws and exclusively for the purpose of performing its obligations under this Agreement.
- 7.2. Each Party shall take all reasonable precautions to protect the confidentiality of personal data accessed and/or processed in connection with this Agreement against unauthorized or unlawful processing and accidental loss, destruction, or damage.
- 7.3. Each Party undertakes to implement appropriate technical and organizational measures to protect the security and confidentiality of personal data accessed and/or processed in connection with this Agreement.
- 7.4. Each Party shall disclose personal data to third parties only upon written consent of the data subject and the other Party concerned.
- 7.5. If the processing of personal data is subject to *Regulation (EU) 2016/679 of the European Parliament and of the Council of 27 April 2016 on the protection of natural persons with regard to the processing of personal data and on the free movement of such data, and repealing Directive*

պայմանով, որ պահանջը ստացած Կողմը անհապաղ քայլեր ձեռնարկի՝ մյուս Կողմերին պահանջի մասին տեղեկացնելու ուղղությամբ: Մյուս Կողմերն իրավունք ունեն վիճարկելու բացահայտման վերաբերյալ ցանկացած այդպիսի պաշտոնական պահանջ:

Յուրաքանչյուր Կողմ պետք է խնամքով պահպանի, փոխադարձ շահերից ելնելով, իրեն տրամադրված ցանկացած փաստաթուղթ՝ պայմանագրային դրույթները կատարելու նպատակով: Այդ փաստաթղթերը պետք է անհապաղ վերադարձվեն սույն Պայմանագրի դադարեցումից հետո՝ ըստ պահանջի:

Սույն Պայմանագրով նախատեսված՝ գաղտնիության պարտավորությունն ուժի մեջ է մնում և շարունակում է գործել՝ Պայմանագրի դադարեցումից կամ ժամկետի ավարտից հետո՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

**Տվյալների պաշտպանություն**

Յուրաքանչյուր Կողմ պետք է մշակի և օգտագործի սույն Պայմանագրի հետ կապված անձնական տվյալները՝ համաձայն տվյալների պաշտպանության գործող օրենքների դրույթների և բացառապես սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով:

Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ նախազգուշակալան միջոցները՝ պաշտպանելու սույն Պայմանագրի առնչությամբ հասանելի դարձված և (կամ) մշակված անձնական տվյալների գաղտնիությունը չարտոնված կամ սպօրինի մշակումից և պատահական կորստից, ոչնչացումից կամ վնասից:

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է իրականացնել համապատասխան տեխնիկական և կազմակերպչական միջոցներ՝ պաշտպանելու սույն Պայմանագրի առնչությամբ հասանելի դարձված և (կամ) մշակված անձնական տվյալների անվտանգությունն ու գաղտնիությունը:

Յուրաքանչյուր Կողմ անձնական տվյալները երրորդ կողմերի առջև է բացահայտի միայն տվյալների սուբյեկտի և շահագրգիռ մյուս Կողմի գրավոր համաձայնությամբ:

Եթե անձնական տվյալների մշակումը ենթակա է Եվրոպական պաշտպանության և Խորհրդի 2016 թվականի ապրիլի 27-ի 2016/679 (ԵՄ) կանոնակարգին՝ անձնական տվյալների մշակման շրջանակներում ֆիզիկական անձանց պաշտպանության, այդ տվյալների սզատ տեղաշարժի

95/46/EC (the “GDPR”), the Parties shall comply with the provisions of the GDPR. In such case, the Parties shall sign a Data Processing Agreement in accordance with Article 28 of the GDPR.

և 95/46/ԻՍԻ հրահանգը չեղյալ համարելու մասին (այսուհետ՝ «ՁԻԴԻՓԷԱ»), Կողմերը պետք է պահպանեն ՁԻԴԻՓԷԱ-ի դրույթները: Այդ դեպքում Կողմերը ստորագրում են Տվյալների մշակման համաձայնագիր՝ համաձայն ՁԻԴԻՓԷԱ-ի 28-րդ հոդվածի:

7.6. In the event of a data breach involving personal data accessed and/or processed in connection with this Agreement, the Party responsible for the breach shall promptly notify the other Parties in writing of the breach and cooperate fully in the investigation, mitigation, and remediation of the breach. Such notification shall be provided without undue delay and in accordance with applicable data protection laws.

